

**1.4.2. Բնակչության դրամական եկամուտներ և ծախսեր, աշխատավարձ և այլ եկամուտներ**

**Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը:** Բնակչության դրամական եկամուտները 2003թ. հունվար-դեկտեմբերին կազմել են 1163637.2 մլն.դրամ, իսկ դրամական ծախսերը՝ 1158887.7 մլն.դրամ, դրանց աճի տեմպերը 2002թ. հունվար-դեկտեմբերի համեմատ համապատասխանաբար կազմել են 115.1% և 117.5%:


**Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները:** Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները՝ հանած պարտադիր վճարումները, հաշվի առած սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2003թ. հունվար-դեկտեմբերին 2002թ. հունվար- դեկտեմբերի նկատմամբ աճել են 9.1%-ով:

**Բնակչության դրամական եկամուտների օգտագործման կառուցվածքը**


(%)

	Տեսակարար կշիռը եկամուտներում		2003թ. հունվար-դեկտեմբերի աճի տեմպը 2002թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ	2003թ. տեսակարար կշռի տոկոսային փոփոխությունը 2002թ. նկատմամբ
	հունվար-դեկտեմբեր			
	2002	2003		
<b>Դրամական եկամուտներ որից օգտագործվել է</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>115.1</b>	<b>-</b>
ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար	74.1	76.0	118.1	1.9
պարտադիր վճարումների և կամավոր մուծումների համար	3.7	4.3	136.2	0.6
ավանդների հավելած	0.4	1.0	276.7	0.6
արտարժույթի գնում	13.9	13.0	106.9	-0.9
այլ ծախսեր	5.4	5.3	113.0	-0.1
<b>Դրամական ծախսեր</b>	<b>97.5</b>	<b>99.6</b>	<b>117.5</b>	<b>2.1</b>
եկամուտների գերազանցում ծախսերի նկատմամբ	2.5	0.4	18.7	-2.1

**Բնակչության դրամական ծախսերի կառուցվածքը**




**Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտների դինամիկան**  
(տոկոսներով նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ)



**Աշխատանքի վարձատրություն:** 2003թ. հունվար-դեկտեմբերին, ըստ յուրաքանչյուր ամիս օպերատիվ վիճակագրական հաշվետվություն ներկայացնող մոտ 9000 կազմակերպությունների հաշվետվությունների նախնական տվյալների գնահատման, աշխատողների միջին անվանական աշխատավարձը կազմել է 32518 դրամ և 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ ավելացել 20.9%-ով: Բյուջետային կազմակերպություններում աշխատողների աշխատավարձը, որի գնահատումը կատարվել է մոտ 4000 բյուջետային ֆինանսավորում ունեցող կազմակերպություններից ստացվող եռամսյակային հաշվետվությունների օպերատիվ տվյալների հիման վրա, կազմել է 19535 դրամ և 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել է 22.9%-ով, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում աշխատողներինը, համապատասխանաբար, 43814 դրամ և աճել՝ 20.1%-ով:

**Անվանական միջին աշխատավարձի փոփոխությունը և տատանումն ըստ տնտեսության հատվածների, 2003թ.**

	2003թ., դրամ			2002թ. նկատմամբ, %		
	ընդամենը	բյուջետային	ոչ բյուջետային	ընդամենը	բյուջետային	ոչ բյուջետային
Հունվար- մարտ	29089	17317	39549	118.7	114.0	121.8
Հունվար- հունիս	30104	17715	40601	118.9	114.4	118.5
Հունվար- սեպտեմբեր	31319	18444	42093	122.2	118.5	121.4
Հունվար- դեկտեմբեր <sup>1</sup>	32518	19535	43814	120.9	122.9	120.1




<sup>1</sup> Գնահատական:

Բյուջետային ֆինանսավորում ունեցող կազմակերպություններում միջին ամսական անվանական աշխատավարձը տատանվել է 13990 դրամից (մշակույթի ոլորտում) մինչև 60025 դրամի (կառավարման ապարատում) սահմաններում, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում աշխատողներինը՝ 15140 դրամից (առողջապահության ոլորտում) մինչև 156298 դրամի (վարկավորման և ապահովագրության ճյուղում) սահմաններում:

**Անվանական միջին աշխատավարձի փոփոխությունը 2002թ. նկատմամբ և տատանումն ըստ տնտեսության ճյուղերի 2003թ. նոյեմբերին**

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ		Ընդամենի նկատմամբ, %		2002թ. նկատմամբ, %	
	նոյեմբեր	հունվար-նոյեմբեր	նոյեմբեր	հունվար-նոյեմբեր	նոյեմբեր	հունվար-նոյեմբեր
<b>Ընդամենը</b>	34478	31807	100.0	100.0	126.6	122.7
Արդյունաբերություն	54261	52296	157.4	164.4	116.6	132.3
Գյուղատնտեսություն	26224	25744	76.1	80.9	123.4	130.1
Անտառտնտեսություն	15289	15509	44.3	48.8	94.0	109.1
Տրանսպորտ	48484	50637	140.6	159.2	109.9	118.1
Կապ	55721	54188	161.6	170.4	103.1	102.5
Շինարարություն	57470	48286	166.7	151.8	124.1	110.0
Առևտուր, հանրային սնունդ	17104	16139	49.6	50.7	90.8	82.2
Բնակարանային-կոմունալ տնտեսություն, կենցաղսպասարկում	43595	40202	126.4	126.4	102.1	111.4
Առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն	15229	13549	44.2	42.6	116.5	105.1
Կրթություն	17629	16956	51.1	53.3	124.7	120.3
Մշակույթ	15096	13432	43.8	42.2	125.4	122.6
Արվեստ	16033	14606	46.5	45.9	127.5	117.0
Գիտություն և գիտական սպասարկում	27353	24989	79.3	78.6	119.5	119.0
Վարկավորում և ապահովագրություն	156298	124459	453.3	391.3	192.8	122.3
Կառավարման ապարատ	59734	48066	173.3	151.1	159.6	129.7
Այլ	31036	28959	90.0	91.0	109.8	114.3

**Աշխատավարձի տատանման փոփոխությունն ըստ տնտեսության ճյուղերի ընդամենը միջինի նկատմամբ 2003թ., %**



Անվանական և իրական միջին աշխատավարձերի դինամիկան ըստ 2003թ. ամիսների

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ	%		Իրական աշխատավարձը, դրամ	%	
		2002թ. նույն ամսվա նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ		2002թ. նույն ամսվա նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ
Հունվար	27669	117.4	86.6	26579	93.9	83.1
Փետրվար	27813	118.2	100.5	28237	119.8	102.1
Մարտ	29728	119.9	106.9	29877	127.0	107.4
Ապրիլ	29758	120.4	104.8	29175	117.7	98.1
Մայիս	30796	119.6	103.5	30431	123.1	102.3
Հունիս	31852	119.3	103.4	31412	122.0	102.0
Հուլիս	33103	125.3	103.9	35030	131.1	110.0
Օգոստոս	33303	126.6	100.6	34087	129.0	103.0
Սեպտեմբեր	34160	126.0	102.6	33327	126.7	100.1
Հոկտեմբեր	33702	124.2	98.7	33736	124.5	98.8
Նոյեմբեր <sup>+</sup>	34478	126.6	102.3	33736	124.3	100.1
Դեկտեմբեր <sup>1</sup>	40632	127.1	117.9	38624	141.8	112.0

	Անվանական միջին աշխատավարձը, ԱՄՆ դոլար		2002թ. նույն ամսվա նկատմամբ, %	Իրական աշխատավարձը, ԱՄՆ դոլար		2002թ. նույն ամսվա նկատմամբ, %
	2003 թ.	2002 թ.		2003 թ.	2002 թ.	
Հունվար	47	42	113.6	46	42	90.9
Փետրվար	47	42	114.0	48	41	115.3
Մարտ	50	43	116.2	51	43	121.6
Ապրիլ	51	43	118.3	50	42	114.5
Մայիս	53	44	118.6	52	43	121.5
Հունիս	54	46	118.3	54	44	121.1
Հուլիս	57	40	142.0	60	38	131.4
Օգոստոս	58	47	122.3	59	47	146.5
Սեպտեմբեր	59	49	122.0	58	51	123.1
Հոկտեմբեր	60	47	128.1	60	49	122.9
Նոյեմբեր <sup>+</sup>	61	47	131.0	60	48	128.1
Դեկտեմբեր <sup>1</sup>	72	55	131.4	68	56	146.5

:

<sup>1</sup> Չնահատական: